

**Հայաստանի Հանրապետության հետ
Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի
Համաձայնագրի ստորագրման արարողությունը**

27-ը մարտի, 2006թ.

**ԱՄՆ Պետքարտուղար Կոնդոլիզա Ռայս
Հայաստանի Հանրապետության հետ
Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի
Համաձայնագրի ստորագրման արարողությունը
27-ը մարտի, 2006թ.
Բենջամին Ֆրենկլինի անվան դահլիճ
Ք. Վաշինգտոն, Կոլումբիա օկրուգ**

(16:00, EST)

ԴԵՍՊԱՆ ԴԱՆԻԼՈՎԻՉ. Տիկին Պետքարտուղար, Նախարար Օսկանյան, Նախարար Խաչատրյան, Պրն. Ներսիսյանց, դեսպաններ և դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, հարգելի հյուրեր. մենք պատիվ ունենք ձեզ բոլորիդ այսօր ողջունել այստեղ՝ ականատես լինելու Հայաստանի և Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի միջև համաձայնագրի ստորագրմանը և տոնելու Հայաստանի ժողովրդի վիթխարի ձեռքբերումը:

Կցանկանայի ջերմ ողջույն հղել Հայաստանի պատվիրակությանը և հիշատակել բոլոր այն անձանց, ովքեր անխնայ աշխատել են, որպեսզի հասնենք այս օրվան, հատկապես մեր դեսպան Ջոն Էվանսին և Երևանում մեր Դեսպանության աշխատակից՝ նրա գործընկերներին, ինչպես նաև, իհարկե, Հայաստանում մեր ՀՄ թիմի այն գերազանց մասնագետների խմբին, ովքեր սերտորեն գործակցել են Ստեֆեն Գրոֆի և Ալեքս Ռասսինի հետ, և այստեղ՝ Վաշինգտոնում մեր ՀՄԿ թիմի այլ անդամներին:

Ի վերջո, կցանկանայի նրախտիքի խոսքի հղել մեր խորհրդի անդամ Բեն Հեքերին այսօրվա արարողությանը մասնակցելու համար: Կցանկանայի նաև այսօր մեզ հետ այստեղ գտնվելու համար շնորհակալություն հայտնել ԱՄՆՄԶԳ-ի ներկայացուցիչ Ֆրեդ Շիփին:

Հայաստանի հետ ՀՄԿ-ի համաձայնագրի շրջանակներում կտրամադրվի 235 միլիոն դոլար, որը կխթանի տնտեսական աճը և կստեղծի նոր հնարավորություններ աղքատության կրճատման համար՝ աջակցելով Հայաստանի ֆերմերներին և նրանց համայնքներին: Հայերի մի զգալի մասը բնակվում է գյուղերում, և նրանց բարեկեցությունը կախված է գյուղատնտեսությունից: Ճանապարհների վատ վիճակը և ոչ հուսալի ոռոգումը այս համայնքներին թույլ չեն տալիս վայելել այն ահռելի աճի օգուտները, որին ականատես ենք եղել Հայաստանի տնտեսության այլ ոլորտներում:

Ուստի, Հայաստանը մշակել է ծրագիր, որն ուղղակի ազդեցություն կունենա գյուղական բնակչության 75 տոկոսի վրա: Հայաստանի ծրագիրը ՀՄԿ-ի օգնությամբ կապահովի հետևյալը. առաջին, մոտ 600 մղոն գյուղական ճանապարհների վերանորոգում, աշխատատեղերի, շուկաների և սոցիալական ծառայությունների հասանելիության ապահովում, և գյուղատնտեսական արտադրողների ու շուկաների միջև կապերի ստեղծում, և ներկրորդ, ոռոգման բարելավում, տեխնիկական աջակցություն և վարկային

օժանդակություն, և հայաստանյան մեկ քառորդ միլիոն տնային տնտեսությունների եկամուտների ավելացում: Ոռոգման ցանցի և ճանապարհների բարելավման շնորհիվ գյուղաբնակները կկարողանան ավելի լավ բերք աճեցնել, այն հասցնել շուկա և ավելի կայուն եկամուտներ վաստակել: ՀՄԿ-ի ֆինանսավորումը նաև կօգնի գյուղաբնակներին օգուտ քաղել Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից ֆինանսավորված այլ ծրագրերից, ինչպիսիք են առողջապահական կլինիկաները, դպրոցներում ինտերնետի կենտրոնները և հանրային տեղեկատվության կենտրոնները, որոնք բոլորը հասանելի կլինեն նույնիսկ ձմեռային դժվար ամիսների ընթացքում:

Ես ապրիլի սկզբին ուղևորվելու եմ Հայաստան, որտեղ պատիվ կունենամ ՀՄ Հայաստանի ծրագիրը ներկայացնել Նախագահ Զիմ Բոլբին և հանդիպել Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լայն շրջանակի հետ, որոնք մասնակից են եղել ծրագրի ստեղծմանը, ինչպես նաև քննարկել ծրագրի իրագործման մեջ նրանց հետագա մասնակցությունը: Նրանց ներգրավումը հույժ կարևոր է՝ ապահովելու Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի ֆինանսավորման արդյունավետ և նպատակային ուղղորդումն այն ծրագրերին, որոնք մշակվել են Հայաստանի կողմից, ինչպես նաև երաշխավորելու այդ ֆինանսավորման օգուտների հասանելիությունն ուղղակիորեն ժողովրդի համար, որին օժանդակելու նպատակն են դրանք հետապնդում:

ՀՄԿ-ի համաձայնագրի կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ գործընկեր պետությունները պարտավոր են շարունակել բարձր ցուցանիշներ արձանագրել արդար կառավարման, ժողովրդի համար ներդրումներ կատարելու և տնտեսական ազատությունը խթանելու ոլորտներում: Ուստի, այսօր այս համաձայնագրի ստորագրմամբ հաստատվում է մեր վստահությունն այն հարցում, որ Հայաստանը շարունակելու է կատարել կառուցակարգային բարեփոխումներ, որոնք կնպաստեն մեր օժանդակության արդյունավետ օգտագործմանը, ներառյալ ժողովրդավարական և ընտրական գործընթացների օժանդակության և պաշտպանության միջոցառումներ:

Հաշվի առնելով, որ մենք նախաձեռնում ենք այս շարժընթաց գործընկերությունը մեր երկու ազգերի միջև, որի նպատակն է տնտեսական աճի միջոցով կրճատել աղքատությունը, կցանկանայի նախարար Օսկանյանին և նախարար Խաչատրյանին հղել մեր անկեղծ և սրտառու շնորհավորանքը: Այժմ պատիվ ունեմ խոսքը փոխանցել մեր նախագահողին՝ դոկտոր Ռայսին: (Ծափահարություն:)

ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՌԱՅՍ. Բարև Ձեզ, տիկնայք և պարոնայք: Պատիվ ունեմ ողջունել Հայաստանի պատվիրակության մեծարգո անդամներին: Նախարար Խաչատրյան, նախարար Օսկանյան, շատ շնորհակալություն Ձեզ, և ինձ թվում է, այստեղ է նաև դեսպան Մարգարյանը: Այստե՞ղ եք: Այո, այստեղ եք: Այո: Կցանկանայի նաև ողջունել Ամերիկայի դեսպան Էվանսին: Այստեղ են դիվանագիտական կորպուսի բազմաթի անդամներ: Ծնորհակալություն Ձեզ այստեղ լինելու համար:

Այսօրվա քայլը խոստումնալից է Հայաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների գործընկերային հարաբերություններում: Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի համաձայնագիրը, որ ստորագրվում է այսօր մեր երկու պետությունների միջև ավելի քան 235 միլիոն դոլար գումարով և նախատեսված է մոտակա հինգ տարի ժամկետով, վկայություն է հայ ժողովրդի և վերջինիս ընտրած իշխանությունների նշանդուն աշխատանքի և նվիրումի: Համաձայնագիրը նաև մարմնավորում է Հայաստանի դիվանագիտության վերափոխումը, քանզի այն հնարավորություն կընձեռի

տղամարդկանց և կանանց բարելավել իրենց կյանքը, հզորացնել իրենց համայնքները և վերափոխել իրենց ապագան:

21-րդ դարի լրջագույն բարոյական մարտահրավերներից է լինելու ծանր աղքատության պատճառած տառապանքը թեթևացնելը: Դա է Նախագահ Բուշի ,Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամն նախաձեռնության նպատակը, այսինքն՝ ամբողջ ազգերի ներգրավել հնարավորությունների ու ձեռնարկության ընդլայնվող շրջանակի մեջ:

Սա ութերորդ համաձայնագիրն է, որը ցայսօր ստորագրվել է Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի կողմից, որի արդյունքում նախորդ տարվա ապրիլից ի վեր կնքված ութ համաձայնագրերի հատկացումների ընդհանուր գումարը կկազմի 1.5 միլիարդ դոլար: Սա վկայում է գործընկեր պետությունների և Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայում աշխատող տղամարդկանց և կանանց կողմից գործադրվող վիթխարի ջանքերի մասին: Դեռևս Դանիլովիչ, ես ցանկանում եմ այս շատ լավ աշխատանքի կապակցությամբ շնորհավորել Ձեզ և Ձեր աշխատակիցներին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր խորհրդի անդամ Քեն Հեքթին այստեղ գտնվելու համար: Սա իսկապես թիմային ջանքերի արդյունք է, և մենք շատ երախտապարտ ենք կատարված աշխատանքի համար:

Հազարամյակի մարտահրավերների կորպորացիան հաստատակամ է տրամադրված՝ իրապես փոխելու աղքատությունից տառապող մարդկանց կյանքը: Կորպորացիայի աշխատանքների ոչ միայն լավ մտադրություններ են, այլ նաև՝ արդյունքներ ստանալու նպատակը: Ուստի, ՀՄԿ-ն 16 անկախ օբյեկտիվ ցուցանիշների միջոցով գնահատում է երկրի առաջընթացն արդար կառավարման, տնտեսական ազատությունների խրախուսման և հանուն ժողովրդի ներդրումների կատարման ուղղություններով: ՀՄԿ-ն նաև գիտակցում է, որ Դուք արդյունքի կհասնեք միայն այն դեպքում, եթե զարգացող պետությունները տներ կանգնեն իրենց զարգացման գործընթացին, և այս ծրագիրը հենց մեր գործընկեր պետություններին հնարավորություն է տալիս, որպեսզի նրանք իրենք որոշեն, թե աջակցության ինչ գումարի դիմել, ինչ նպատակով օգտագործել այդ աջակցությունը, և ինչ չափանիշներով չափել հաջողությունը:

Համաձայնագիրը, որ մենք կստորագրենք այսօր այստեղ, ուղղակիորեն կբարելավի 750,000 հայերի, այսինքն՝ երկրի բնակչության երեք քառորդի կյանքը: Մոտակա հինգ տարիներին հայերը կկառուցեն մոտ 1,000 կիլոմետրի հասնող գյուղական ճանապարհներ: Նրանք կկատարելագործեն իրենց ոռոգման և դրենաժի համակարգերը: Նրանք կտնկեն նոր բերքատեսակներ: Եվ, այս ամենին զուգահեռ, Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանին կցուցաբերեն վերջինիս հրատապ կարգով անհրաժեշտ տեխնիկական աջակցություն և վարկային օժանդակություն:

Մեր գործընկերությունը կօգնի Հայաստանին կայուն տնտեսական աճի միջոցով պայքարել աղքատության դեմ: Այս ուղղությամբ շարունակ առաջընթաց ապահովելու նպատակով Հայաստանը պետք է շարունակի խորացնել ժողովրդավարական բարեփոխումները: Միջազգային և ներպետական դիտորդները մտահոգություններ են հայտնել վերջերս անցկացված սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ, և Հայաստանի կառավարությունն ընդունել է այդ դժվարությունների առկայության փաստը և հանձն առել բարելավել ընտրությունների անցկացումը 2007 և 2008 թվականներին: Մրանք կարևոր հանձնառություններ են, և Ամերիկայի Միացյալ Նահանգները պատրաստ են օգնել Հայաստանին մոտալուտ ընտրությունների արդար և ազատ անցկացումն ապահովելու գործում:

Ամերիկան մեծ ցանկություն ունի սերտացնել մեր գործընկերությունը Հայաստանի՝ որպես ժողովրդավար պետության հետ, և այս նպատակի իրագործմանը կնպաստի այսօր ստորագրվող համաձայնագիրը: Մենք Ձեր հաջողությունը համարում ենք մեր հաջողությունը և միշտ կօգնենք Ձեզ՝ ապահովելու ազատության և բարօրության այն ապագան, որին արժանի են և որը ցանկանում են ունենալ բոլոր հայերը: Ծատ շնորհակալ եմ: (Ծափահարություն:)

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆՅԱՆ. Պետքարտուղար Ռայս, դեսպան Դանիլովիչ, ես այսօր եկել եմ, որպեսզի Հայաստանի Հանրապետության Նախագահի և այստեղ գտնվող ու Հայաստանի իշխանությունները ներկայացնող իմ գործընկերների անունից երախտիք հայտնեմ Նախագահ Բուշին, Պետքարտուղար Ռայսին, դեսպան Դանիլովիչին, ԱՄՆ-ի Կառավարությանը և ամերիկյան ժողովրդին Հայաստանի Հանրապետության հետ Հազարամյակի մարտահրավերների համաձայնագիր կնքելու համար:

Նախագահ Բուշի հեռատեսական մոտեցումը զարգացման խնդիրներին, որին համադրվում է ԱՄՆՄԶԳ-ի և ԱՄՆ-ի այլ ծրագրերի միջոցով արդեն իսկ Հայաստանին ցուցաբերված անգնահատելի աջակցությունը, հետևում է ամերիկյան միսիոներների լավագույն ավանդույթներին, ովքեր մեծ օգուտ են տվել հայերին: Հազարամյակի մարտահրավերների համաձայնագիրը սեփական համոզմունքների հիման վրա բարի գործ անելու բնական դրսևորում է, որի մտադրությունն է ամրապնդել օգնություն ստացողի՝ սեփական արժանիքների զգացողությունը և կարողությունները:

21-րդ հարյուրամյակում, երբ մարդասիրություն նշանակում է ոչ թե բարեգործություն, այլև՝ խորքային պրոբլեմների լուծումների մշակում, մենք ուղղունում ենք Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության որոշումը՝ ուղղակիորեն աջակցելու և օժանդակելու այն պետություններին, ովքեր, կայացված որոշման համաձայն, ապահովում են արդար կառավարում, կատարում են ներդրումներ հանուն ժողովրդի և խրախուսում են տնտեսական ազատությունը՝ նպատակ հետապնդելով արժանապատիվ և անվտանգ կյանք երաշխավորել իրենց քաղաքացիներին:

Տեսնում եմ, որ այստեղ են նաև ՀՄՀ օգնություն ստացող այլ պետությունների ներկայացուցիչ մեր գործընկերները, և վստահ եմ, որ նրանք էլ ինձ հետ միասին կասեն, որ այս դրամաշնորհի միջոցով Ամերիկայի Միացյալ Նահանգները ճանաչում են մեր կյանքի իրական և երկակի բնույթը, այսինքն, թե ինչ է նշանակում շարունակ ապրել աղքատության պայմաններում և ականատես լինել առաջընթացի: Մի կողմից, Հայաստանի բնակչության մեկ երրորդը շարունակում է ապրել աղքատության մեջ: Մեր գյուղական համայնքների երկու երրորդն ուղղակիորեն կապված չեն բաշխման համակարգի կենտրոնական ճանապարհներին, և մեր երկրորդային ու երրորդային ճանապարհների մեծ մասը բավարար հասանելիություն չեն ապահովում: Մյուս կողմից, Հայաստանը կարողացել է, չնայած բացասական այնպիսի լուրջ գործոնների, ինչպիսիք են չլուծված հակամարտության և փակ սահմանների առկայությունը, աշխարհում առաջին տեղը գրավել նախկինում տրամադրված օտարերկրյա աջակցության օգտագործման ցուցանիշների գնահատման հիման վրա, մասնավորեցնել և իրականացնել այնպիսի օրենսդրական կանոնակարգում, որի շնորհիվ մեր տնտեսությունը դասակարգվում է աշխարհի առավել ազատական տնտեսությունների շարքը, և արձանագրել, արդյունահանվող բնական պաշարների բացառման հաշվարկով, տարածաշրջանում ամենաբարձր տնտեսական աճը:

Այդ պատճառով է, որ երկարատև խորհրդակցային գործընթացի արդյունքում ձևավորվեց այն եզրակացությունը, թե աղքատությունն էապես կրճատելու նպատակով դիմելու ենք Հազարամյակի մարտահրավերների կորպորացիային, որպեսզի գումարները ծախսվեն ենթակառուցվածքի երկու կարևոր ոլորտներում: Մեր ծրագիրը գիտակցաբար մշակվել է այնպես, որպեսզի դրանում հաշվի առնվեն այլ դոնորների աշխատանքը համալրելու հնարավորությունները:

Հազարամյակի մարտահրավերների համաձայնագրի ստորագրման այս օրը Հայաստանը գիտակցում է, որ մենք պարտավոր ենք հենվել այն վստահության վրա, որ դրսևորվել է մեր կառավարության ու ժողովրդի նկատմամբ: Ինչպես տնտեսական զարգացումն է նպաստում ժողովրդավարացմանը, այնպես էլ ժողովրդավարությունն է արագացնում ու խորացնում տնտեսական զարգացումը: Մենք հասկանում ենք, որ ԱՄՆ-ի կառավարությունը որոշում է այս միջոցներն օգտագործել տնտեսական զարգացման նպատակով միայն այն դեպքում, երբ հասարակությունը և վերջինիս ղեկավարությունը գիտակցում են ժողովրդավարական գործելակերպ խրախուսելու և պահպանելու՝ իրենց քաղաքական պատասխանատվությունը:

Հայաստանն աշխարհի ամենաներհասարդ ժողովրդավարությունների շարքն է դասվում, և մեր ժողովրդավարական ու տնտեսական բարեփոխումներն այլևս անշրջելի են: Չնայած մեր էական առաջընթացին, մենք հասկանում ենք, որ դեռ շատ անելիքներ կան բարեփոխումները համապարփակ դարձնելու համար: Գիտենք, որ կոռուպցիան չպետք է հանդուրժել, որ իշխողը պետք է լինի օրենքը, և որ ժողովրդավարության սկզբունքները պետք է վեր ածել մեր երկրում ժողովրդավարության ավանդույթների:

Տիկին Պետքարտուղար. 2007 և 2008 թվականների ընտրությունները, որոնց Դուք անդրադարձաք, կլինեն մեր ժողովրդավարական գործելակերպի փորձությունը: Մինչ այդ մեր խնդիրն է գործընկերաբար աշխատել Ամերիկայի Միացյալ Նահանգների և եվրոպական պետությունների կառավարությունների հետ՝ իրագործելու անհրաժեշտ ուղղիչ քայլեր ժողովրդի ձայնի ազնիվ ու արդար արտահայտության համար անհրաժեշտ պայմանները բարելավելու ուղղությամբ: Այս առումով, մենք ողջունում ենք որոշ կառուցվածքային բարեփոխումներ կատարելու, ինչպես նաև կրթության և հանրության իրազեկման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ ամերիկյան կողմի առաջարկները: Մենք արդեն նախաձեռնել ենք ընտրացուցակների իսկությունը ստուգելու գործընթացը: Մենք առաջընթաց ենք արձանագրում ընտրական օրենսդրության բարեփոխման ուղղությամբ՝ մեր խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերի ակտիվ մասնակցությամբ և համաձայնությամբ: Ինչպես և նախկին տարիներին, ԵԱՀԿ-ի դիտորդները ներկա կգտնվեն և կհետևեն մեր ընտրությունների ընթացքին:

Այլ կերպ ասած, տիկին Պետքարտուղար, Հայաստանը և հայերը վճռական են՝ օգուտ քաղելու Հազարամյակի մարտահրավերների համաձայնագրի մտադրությունից և բովանդակությունից, քանզի մեր ժողովուրդը դրան արժանի է:

Ծնորհակալություն: (Ծափահարություն:)

(Ստորագրվում է Համաձայնագիրը:)

(Ծափահարություն:)